ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«19» հոկտեմբերի 2019թ. № 400-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N698-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Դատարանի վճռի կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշումների հիման վրա կամ վիճարկվող ստուգման կամ այլ վարչական ակտերի գծով կամ հարկման համակարգերի փոփոխության արդյունքում հարկային պարտավորությունների և (կամ) դեբետային գումարների մնացորդների փոփոխության կարգը հաստատելու մասին» N698-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

1) հրամանի 4-րդ կետը «կարգով:» բառից հետո լրացնել «Սույն կետին համապատասխան՝ մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ուժի մեջ մտած ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված հարկային պարտավորությունների և (կամ) դեբետային գումարների մնացորդների փոփոխության դեպքում եզրակացության կազմմանը ներգրավվում են նաև համապատասխան ստուգման կամ այլ վարչական ակտը կազմած ստորաբաժանման աշխատակիցը, իսկ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրության հիման վրա պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության ընդունած վարչական ակտերի գծով՝ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության աշխատակիցը: Ընդ որում, եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2016 թվականի հուլիսի 21-ի N131-Ա հրամանով սահմանված կարգով հարկային պարտավորությունների և (կամ) դեբետային գումարների մնացորդների փոփոխությունները շարունակվում են նաև 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներում, ապա այդ մասով կիրառելի են սույն հրամանով սահմանված դրույթները:» բառերով,

2) հրամանով հաստատված կարգի 8-րդ կետում «իրավաբանական վարչություն» բառերը փոխարինել «կազմակերպման և հսկողության վարչություն» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6/19/2019

X

VERIFIED OCSP 6/19/2019 12:15:57 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ